

**Անհատական պահատուկներ (Պարտատոմս ձեռք բերող հաճախորդների համար)**  
**Տեղեկատվական ամփոփագիր**

Մայիսի 12, 2017

Անհատական պահատուկներից կարող են օգտվել «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) հաշվետեր և ոչ հաշվետեր ֆիզիկական (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր) ու իրավաբանական անձինք:

Անհատական պահատուկները տրամադրվում են Բանկի՝

- «Նոր Նորք» մասնաճյուղում  
Գայի պողոտա, 10/6
- «Կիլիկիա» մասնաճյուղում  
Քաջազնունի փողոց, 4/1

**Ուշադրություն**

Արգելվում է դյուրավառ, պայթյունապտանգ կամ իր բնույթով վտանգավոր այլ գույքի, ինչպես նաև շուտ փչացող ապրանքների պահպանումը (ներառյալ չսահմանափակվելով՝ թմրանյութեր, զենք, զինամթերք, պայթուցիկ նյութեր և սարքեր, ռադիոակտիվ նյութեր, սննդամթերք, թունաքիմիկատներ)

**Պահատուկների չափսերը և սակագները**

Չափս	Փոքր	Միջին	Մեծ	Շատ մեծ
<b>Ժամկետ</b>	<b>85 x 300 x 500մմ</b>	<b>170 x 300 x 500մմ</b>	<b>170 x 610 x 500մմ</b>	<b>340 x 610 x 500մմ</b>
<b>1-30 օր</b>	5 000 ՀՀ դրամ	7 500 ՀՀ դրամ	10 000 ՀՀ դրամ	12 500 ՀՀ դրամ
<b>31-90 օր</b>	7 500 ՀՀ դրամ	10 000 ՀՀ դրամ	15 000 ՀՀ դրամ	17 500 ՀՀ դրամ
<b>91-180 օր</b>	12 500 ՀՀ դրամ	15 000 ՀՀ դրամ	22 500 ՀՀ դրամ	30 000 ՀՀ դրամ
<b>181-360 օր</b>	17 500 ՀՀ դրամ	22 500 ՀՀ դրամ	30 000 ՀՀ դրամ	45 000 ՀՀ դրամ

**Ուշադրություն**

Հաճախորդի նախաձեռնությամբ պահատուկի վարձակալության վաղաժամկետ դադարեցման դեպքում չօգտագործված ժամկետի սպասարկման վճարը ենթակա չէ վերադարձման

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխվել:  
 Հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի <https://www.conversebank.am> ինտերնետային կայք, Բանկի Գլխավոր գրասենյակի Հաճախորդների սպասարկման գրասենյակ/ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝ (+374 10) 511 211:

**Դեպոնացվող գումար**

Պահատուկը վարձակալելիս դեպոնացվում է միանվագ 25 000 ՀՀ դրամ ապահովագրական դեպոզիտ, որը կիրառվում է բանալու կորստի կամ վնասվելու հետ կապված վնասները հատուցելու համար:

- Պահատուկի տրամադրման ծառայության դադարեցման դեպքում հաճախորդը հետ է ստանում նախապես վճարված ապահովագրական դեպոզիտի գումարը:
- Պահատուկի բանալին կորցնելու դեպքում հաճախորդը դիմում է ներկայացնում Բանկ: Այս դեպքում հաճախորդին չի տրամադրվում ապահովագրական դեպոզիտի գումարը, և եթե նա շարունակում է օգտվել պահատուկից, ապա կրկին ապահովում է սակագներով նախատեսված ապահովագրական դեպոզիտը:

**Պահատուկների ընթացիկ սպասարկումը**

Պայմանագրի գործողության ընթացքում հաճախորդը՝ Պայմանագրով ամրագրված ժամերի սահմաններում կարող է օգտվել պահատուկից (ավելացնել կամ վերցնել այնտեղ պահպանվող արժեքները, իրականացնել Պայմանագրի շրջանակներում ցանկացած գործողություն):

**Պահատուկների վարձակալության ժամկետի երկարաձգումը և օգտագործման դադարեցումը**

Պահատուկի վարձակալության ժամկետը կարող է երկարաձգվել Հաճախորդի ցանկությամբ: Երբ Հաճախորդի բանկային հաշիվներին առկա է Սակագներով սահմանված համապատասխան չափով գումար և Հաճախորդը չի դիմել վարձակալության ժամկետի դադարեցման համար, Պահատուկի վարձակալության ժամկետը երկարաձգվում է՝

- Հաճախորդի հետ կնքված Պայմանագրի ժամկետով
- այն առավելագույն ժամկետով, որի երկարաձգման համար Հաճախորդի բանկային հաշիվներին առկա են համապատասխան ֆինանսական միջոցներ:

Եթե Հաճախորդը Բանկում չունի հաշիվ, ապա վարձակալության ժամկետը լրանալուն պես Բանկն իրականացնում է հաճախորդին ծանուցելու գործողություններ հաճախորդի կողմից Անհատական պահատուկ տրամադրելու հայտում նշված նախընտրելի եղանակներով:

Ծանուցման 30-օրյա ժամկետը լրանալուց հետո, եթե Հաճախորդը չի իրականացնում ի պահ հանձնված արժեքների հետ վերցնելու պարտականությունը, ապա Բանկն իրավունք ունի բացել պահատուկը՝ ստեղծված գույքագրման հանձնաժողովի մասնակցությամբ: Պահատուկի պարունակությունը ակտավորվում է հանձնաժողովի կողմից և պահպանվում Բանկում:

Պահատուկի վարձակալության ժամկետի երկարաձգման այլ պայմանները սահմանում են հաճախորդի հետ կնքված պայմանագրով:

**Հաճախորդի կողմից ներկայացվող փաստաթղթերի ցանկ**

Ֆիզիկական անձ	
1	Անձը հաստատող փաստաթուղթ
2	Հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ) կամ տեղեկանք ՀԾՀ չստանալու վերաբերյալ
	Պահանջվում է միայն ՀՀ ռեզիդենտների և/կամ քաղաքացիների դեպքում
	Չի պահանջվում, եթե Հաճախորդը որպես անձը հաստատող փաստաթուղթ ներկայացնում է նույնականացման քարտը, որտեղ ամրագրված է հանրային ծառայությունների համարանիշը

Անհատ ձեռնարկատեր	
1	ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից տրամադրված հաճախորդի պետական գրանցման վկայական,
2	«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով զբաղվելու դեպքում համապատասխան լիցենզիան /առկայության դեպքում/,
3	ՀՎՀՀ (հարկային կոդ), եթե այն ներառված չէ իրավաբանական անձի պետական գրանցման վկայականում,
4	Անձը հաստատող փաստաթուղթ
5	Հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ) կամ տեղեկանք ՀԾՀ չստանալու վերաբերյալ  Պահանջվում է միայն ՀՀ ռեգիդենտների և/կամ քաղաքացիների դեպքում  Չի պահանջվում, եթե Հաճախորդը որպես անձը հաստատող փաստաթուղթ ներկայացնում է նույնականացման քարտը, որտեղ ամրագրված է հանրային ծառայությունների համարանիշը

ՀՀ ռեգիդենտ իրավաբանական անձ	
1	Կանոնադրություն
2	Համապատասխան կազմակերպչաիրավական տեսակի իրավաբանական անձանց համար՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հիմնադրի որոշում կամ հիմնադիրների ընդհանուր (հիմնադիր) ժողովի արձանագրություն (եթե հիմնադիր/ներ/ի (բաժնետերեր, մասնակիցներ) բաժնեմասերի և այլ տվյալների մասին տեղեկատվությունները բացակայում են կանոնադրությունում), ընդ որում՝ <ul style="list-style-type: none"> <li>▪ <b>բաժնետերերի, մասնակիցների ֆիզիկական անձ լինելու դեպքում</b>՝ տեղեկություն բաժնեմասերի չափի մասին, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, հաշվառման հասցեն, հեռախոսի համարը (առկայության դեպքում)</li> <li>▪ <b>բաժնետերերի, մասնակիցների իրավաբանական անձ լինելու դեպքում</b>՝ կազմակերպության կանոնադրությունը, պետական գրանցման վկայականը /բաց բաժնետիրական ընկերություն լինելու դեպքում պահանջվում է տեղեկություններ 5%-ից ավելի բաժնեմաս ունեցող բաժնետերերի համար/, ՀՎՀՀ /եթե այն ներառված չէ իրավաբանական անձի պետական գրանցման վկայականում/</li> </ul>
3	«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով զբաղվելու դեպքում համապատասխան լիցենզիան /առկայության դեպքում/
4	ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից տրամադրված հաճախորդի պետական գրանցման/հաշվառման վկայական
5	Հարկ վճարողի հաշվառման համարը /այսուհետ՝ ՀՎՀՀ/ (հարկային կոդ), եթե այն ներառված չէ իրավաբանական անձի պետական գրանցման վկայականում
6	Կանոնադրությամբ սահմանված ղեկավար անձանց անձը հաստատող փաստաթղթերի պատճենները

ՀՀ ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ	
1	Կանոնադրություն
2	Հիմնադիր փաստաթղթերը տվյալ երկրի օրենսդրությամբ սահմանված կարգով
3	Տեղեկություններ բաժնետերերի, մասնակիցների մասին, եթե բացակայում են կանոնադրությունում/, ընդ որում՝ <ul style="list-style-type: none"> <li>▪ <b>բաժնետերերի, մասնակիցների ֆիզիկական անձ լինելու դեպքում</b>՝ տեղեկություն բաժնեմասերի չափի մասին, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, հաշվառման հասցեն, հեռախոսի համարը (առկայության դեպքում)</li> <li>▪ <b>բաժնետերերի, մասնակիցների իրավաբանական անձ լինելու դեպքում</b>՝ կազմակերպության կանոնադրությունը, պետական գրանցման վկայականը /բաց բաժնետիրական ընկերություն լինելու դեպքում պահանջվում է տեղեկություններ 5%-ից ավելի բաժնեմաս ունեցող բաժնետերերի համար/, ՅՎՀՀ /</li> </ul>
4	«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով զբաղվելու դեպքում համապատասխան լիցենզիան (առկայության դեպքում)
5	Տվյալ երկրի համապատասխան մարմնի կողմից տրված պետական գրանցման վկայական
6	Կանոնադրությամբ սահմանված ղեկավար անձանց անձը հաստատող փաստաթղթերի պատճենները

**Ծանուցում Ֆինանսական համակարգի հաշտարարի վերաբերյալ**

Տեղեկացնում ենք, որ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ կողմից Ձեզ մատուցվող ծառայությունների հետ կապված տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջի դեպքում ծագած վեճերն ու տարաձայնությունները կարող են լուծվել Ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով: Բանկի և Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի միջև կնքված համաձայնագրի համաձայն՝ Բանկը հրաժարվում է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից միայն այն գույքային պահանջների մասով, որոնց չափը չի գերազանցում 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, իսկ գործարքի գումարի չափը չի գերազանցում 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

Հասցե՝ ՀՀ, 0010, ք. Երևան, Մ. Խորենացու փող., 15  
 «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն 7-րդ հարկ  
 Էլ. փոստ՝ info@fsm.am  
 Հեռախոս՝ (+37460) 70-11-11  
 Ֆաքս՝ (+37410) 58-24-21